ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «25» 09 2025թ N 277Ն-Լ

«ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մայիսի 15-ի N 593-Ա որոշման 5-րդ կետի 1-ին ենթակետերով.

հրամայում եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Երկրագործության գիտաարտադրական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել «Գյումրիի սելեկցիոն կայան» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի պարտականությունները կատարող Լևոն Անանյանին սույն հրամանի ստորագրման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել Ընկերության կանոնադրության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության

արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
20---- թվականի սեպտեմբերի —ի N ——Լ հրամանի

Կազմված է «—» «————————» 20 թ.
Բաղկացած է ———— թերթից

Ընդամենը ——— օրինակ
ՕՐԻՆԱԿ ——

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«————————————» ՓԲԸ
միակ հիմնադրի
«—» «————————» 20 թ. կայացրած
որոշմամբ
որոշում թիվ _____
տնօրեն՝_____
«—» «————————» 20 թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ արդարադատության նախարարության
աշխատակազմի իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործակալության
———————— կողմից

«—» «————————» 20 թ.

գրանցման համար ————————
_____
ՀՎՀՀ————————————
աշխատակից՝ ————————————
_____

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

(նոր խմբագրությամբ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Երկրագործության գիտաարտադրական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) առևտրային կազմակերպություն հանդիսացող տնտեսական ընկերություն, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

1.2. Ընկերությունը հանդիսանում է «Գյումրիի սելեկցիոն կայան» փակ բաժնետիրական ընկերության (գրանցման համար՝ 55.070.00189) «Երկրագործության գիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (գրանցման համար՝ 99.120.1087840) իրավահաջորդը:

1.3. Ընկերությունը գործում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետև՝ Օրենսգիրք), «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետև՝ Օրենք) պահանջներին համապատասխան և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Օրենսգրքով, Օրենքով այլ օրենքներով և սույն կանոնադրությամբ:

1.4. Ընկերության ֆիրմային անվանումն է.

- հայերեն լրիվ՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Երկրագործության գիտաարտադրական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն
- հայերեն կրճատ՝ ՀՀ ԷՆ ԵԳԿ ՓԲԸ
- ռուսերեն լրիվ՝ Закрытое акционерное общество «Научно-производственный центр земледелия» Министерства Экономики Республики Армения
- ռուսերեն կրճատ՝ ЗАО НЦЗ МЭ РА
- անգլերեն լրիվ «Scientific production centre for farming» closed joint stock company of Ministry of Economy of the Republic of Armenia
- անգլերեն կրճատ՝ SCRF CJSC MoE RA

1.5. Ընկերության գտնվելու վայրը և փոստային հասցեն է՝ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք Սելեկցիոն կայան թիվ 61:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Ընկերության գործունեության առարկան և նպատակը բուսաբուծության ոլորտում գիտական, գիտատեխնիկական հետազոտություններ, գիտակրթական աշխատանքներ կազմակերպելն ու իրականացնելն է, ինչպես նաև տոհմասելեկցիոն աշխատանքների իրականացնելը: Ընկերությունում մշակվում են գիտական գործունեության աշխատանքների թեմաները, իրականացվում է պլանային թեմաների նյութատեխնիկական և ֆինանսական ապահովածությունը:

2.2. Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնական առարկան և նպատակներն են.

1) հացահատիկային, հատիկաընդեղեն մշակաբույսերի, բազմամյա խոտաբույսերի, բանջարային և տեխնիկական որոշ մշակաբույսերի՝

ա) նոր սորտերի բուծումը և առաջնային սերմնաբուծությունը,

բ) նոր սորտերի դաշտային փորձարկումների իրականացման աշխատանքները,

գ) համաշխարհային հավաքածուի սորտերի փորձարկումը և ուսումնասիրությունը,

դ) սերմերի գենետիկական բանկի ստեղծումն ու պահպանումը,

2) երկրագործության բնագավառում նոր տեխնոլոգիաների մշակումը, փորձարկումը և ներդրումը,

3) տարբեր գյուղատնտեսական մշակաբույսերի վրա ագրոքիմիկատների և թունաքիմիկատների ազդեցության դաշտային հետազոտությունների իրականացումը,

4) գիտական հոդվածների, ձեռնարկների, ուղեցույցների հրապարակումը,

5) դրամաշնորհային մրցույթներին մասնակցությունը,

5) գիտական կառույցների հետ համագործակցությունը,

6) բուսաբուծության ոլորտում գիտական կադրերի պատրաստումը,

7) տոհմային կենդանիների և սերմնահեղուկի ստացում:

2.3. Կազմակերպությանը թույլատրվում է իրականացնել հետևյալ ձեռնարկատիրական գործունեության տեսակները՝

1) հացահատիկային, հատիկաընդեղեն մշակաբույսերի, բազմամյա խոտաբույսերի բանջարային և տեխնիկական որոշ մշակաբույսերի սերմերի, տոհմային կենդանիների, սերմնահեղուկի վաճառք, արտահանում, ներմուծում, փոխանակում, գնում,

2) գյուղատնտեսական գործունեության արդյունքում ստացված արտադրանքի վաճառք,

3) գյուղատնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին, անհրաժեշտության դեպքում, վճարովի խորհրդատվական ծառայության մատուցում,

4) գյուղատնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների համար գիտական հետազոտությունների իրականացման նպատակով վճարովի ծառայությունների մատուցում,

5) Ընկերության կողմից բուծված սորտերի համար լիցենզիոն պայմանագրերի կնքում,

6) գյուղատնտեսության բնագավառի ուսումնական հաստատությունների ուսանողների ուսումնական պրակտիկաների կազմակերպում:

2.2. Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթն ուղղվում է Ընկերության կանոնադրական խնդիրների իրականացմանը:

2.3. Ընկերությունը կարող է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում:

2.4. Ընկերության գործունեության նպատակը, ծառայություններ մատուցելու, աշխատանքներ կատարելու և ապրանքներ արտադրելու արդյունքում շահույթ ստանալն է:

2.5. Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած գործունեություն:

2.6. Ընկերությունը ունի քաղաքացիական իրավունքներ և կրում է քաղաքացիական պարտականություններ, որոնք նրան անհրաժեշտ են օրենքով չարգելված ցանկացած գործունեություն իրականացնելու համար:

2.7. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված գործողության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիա (թույլտվություն) ձեռք բերելու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայով նախատեսվել է, որ Ընկերությունը, բացի լիցենզավորվող գործունեությունից, չի կարող զբաղվել այլ գործունեությամբ, կամ լիցենզիայով նախատեսված են գործունեության առանձին տեսակներով զբաղվելու սահմանափակումներ, ապա Ընկերությունը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների, նույնպիսի գործունեությամբ, որն արգելված է լիցենզիայով:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

3.1. Ընկերությունն իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում պետական գրանցման պահից:
3.2. Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, կարող է հաշվարկային և այլ հաշիվներ բացել բանկերում: Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանմամբ կլոր կնիք՝ սույն կանոնադրության 1.4 կետում նշված լեզուներով, դրոշմակնիք և ձևաթղթեր, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային (սպասարկման) նշաններ:
3.3. Ընկերությունը ունի սեփական առանձնացված գույք,կարող է իր անունից մասնակցել գույքային շրջանառությանը, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
3.4. Ընկերությունն իր պարտականությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:
3.5. Հայաստանի Հանրապետությունը և համանքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:
3.6. Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար:
3.7. Ընկերության բաժնետերերը պատասխանատու չեն Ընկերության պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաներում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:
3.8. Ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք ունեցող անձն Ընկերության հետ համապարտ պատասխանատվություն է կրում իր ցուցումներին համաձայն կնքված գործարքների կատարման համար: Ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք ունեցող է համարվում այն անձն, որը Ընկերության կանոնադրական կապիտալում գերեկշռող մասնակցության ուժով կամ նրա և Ընկերության միջև կնքված պայմանագրի հիման վրա Ընկերության գործողությունները կանխորոշվելու հնարավորություն ունի:
3.9. Եթե Ընկերության սնանկության պատճառ են հանդիսացել բաժնետերերի կամ այլ անձանց գործունեությունը (անգործունեությունը), որոնք ունեն Ընկերությանը կատարման համար պարտադիր ցուցումներ տալու իրավունք, կամ այլ կերպ՝ Ընկերության գործունեությունը կանխորոշելու հնարավորություններ, ապա Ընկերությանը պատկանող գույքի արժեքի անբավարարության դեպքում, նշված բաժնետերերի կամ այլ անձանց վրա կարող է դրվել լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն՝ Ընկերության պարտավորությունների համար:
3.10. Կատարման համար Ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք կամ այլ կերպ՝ Ընկերության Գործունեությունը կանխորոշելու հնարավորություններ ունեցող բաժնետերերի կամ այլ անձանց գործողությունները (անգործությունը) համարվում են Ընկերության սնանկության պատճառ միայն այն դեպքում, եթե տվյալ անձինք օգտագործել են այդ իրավունքը կամ հնարավորություններն Ընկերությանը որոշակի գործողություններ կատարել կամ չկատարել պարտադրելու նպատակով, նախապես իմանալով, որ այդ պատճառով Ընկերությունը կհայտնվի սնանկության վիճակում:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԸ, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ

4.1. Ընկերությունն իրավունք ունի ստեղծել մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հիմնարկներ՝ Օրենսգրքի, Օրենքի և այլ իրավական ակտերի դրույթներին համապատասխան:
4.2. Ընկերությունն օտարերկրյա պետություններում մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հիմնարկներ է ստեղծում մասնաճյուղերի,

ներկայացուցչությունների և հիմնարկների գտնվելու վայրի, երկրի օրենքներին, այլ իրավական ակտերին համապատասխան, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.3. Ներկայացուցչություն է համարվում Ընկերության գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որը ներկայացնում է Ընկերության շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունը:

4.4. Մասնաճյուղ է համարվում Ընկերության գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որն իրականացնում է նրա բոլոր գործառույթները կամ դրանց մի մասը՝ ներառյալ ներկայացուցչական գործառույթները:

4.5. Հիմնարկն Ընկերության կողմից ստեղծված կառավարչական, սոցիալ-մշակույթային և ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնող կազմակերպություն է:

4.6. Ներկայացուցչությունները, մասնաճյուղերը և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Ընկերության հաստատված կանոնադրությունների հիման վրա:

4.7. Ընկերությունը ներկայացուցչություններին, մասնաճյուղերն և հիմնարկներին տրամադրում է գույք: Ներկայացուցչությունների, մասնաճյուղերի և հիմնարկների գույքը հաշվառվում է ինչպես դրանց առանձին հաշվեկշիռներում, այնպես էլ Ընկերության հաշվեկշռում:

4.8. Ներկայացուցչությունների մասնաճյուղերի և հիմնարկների ղեկավարները նշանակվում են Ընկերության գլխավոր տնօրենի կողմից և գործում նրա լիազորագրերի հիման վրա:

4.9. Ներկայացուցչությունները մասնաճյուղերը և հիմնարկները գործում են Ընկերության անունից: Դրանց գործունեության համար պատասխանատվություն է կրում Ընկերությունը:

4.10. Սույն կանոնադրությունը հաստատելու պահից Ընկերությունը չունի ներկայացուցչություններ, մասնաճյուղեր և հիմնարկներ:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԴՈՒՍՏՐ ԿԱՄ ԿԱԽՅԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՎԵԼՈՒ ԿԱՄ ԱՅԼ ԴՈՒՍՏՐ ԿԱՄ ԿԱԽՅԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐՊԵՍ ՀԻՄՆԱԿԱՆ (ԳԵՐԱԿՇՌՈՂ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ) ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

5.1. Ընկերությունը համարվում է դուստր, եթե այլ (հիմնական) տնտեսական ընկերեկցություն կամ ընկերություն տիրապետում է Ընկերության բաժնետոմսերի այնպիսի քանակի, որը հնարավորություն է ընձեռում հիմնական ընկերակցությանը կամ ընկերությանը կանխորոշել Ընկերության որոշումները:

5.2. Ընկերությունը դուստրի կարգավիճակում կարող է հայտնվել նրա և հիմնական ընկերակցության կամ ընկերության միջև կնքված պայմանագրի ուժով:

5.3. Դուստր ընկերության կարգավիճակում հայտնված Ընկերությունը պատասխանատվություն չի կրում ընկերակցության կամ ընկերության պարտքերի համար:

5.4. Ընկերությունը կարող է ձեռք բերել հիմնական ընկերության կարգավիճակ, եթե նա տիրապետում է մեկ այլ բաժնետիրական ընկերության բաժետոմսերի այնպիսի քանակի կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի մի այնպիսի բաժնեմասի, որը հնարավորություն է ընձեռում Ընկերությանը կանխորոշել այդ բաժնետիրական ընկերության կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության որոշումները:

5.5. Ընկերությունը կարող է կանխորոշել այլ ընկերությունների որոշումները՝ վերջիններիս հետ կնքված պայմանագրերի ուժով:

5.6. Հիմնական ընկերության կարգավիճակում հայտնված Ընկերությունը դուստր ձեռնարկության հետ համապարտ պատասխանատություն է կրում վերջինիս կողմից ի կատարում իր ցուցումների կնքված գործարքների համար:

5.7. Դուստր Ընկերության կարգավիճակում հայտնված Ընկերության բաժնետերերն իրավունք ունեն հիմնական ընկերակցությունից կամ ընկերությունից պահանջել հատուցել նրա մեղքով Ընկերությանը պատճառած վնասները: Վնասները համարվում են հիմնական ընկերակցության կամ ընկերության կողմից պատճառված, եթե դրանք վրա են հասել Ընկերության կողմից ընկերակցության պարտադիր ցուցումները կատարելու հետևանքով:
5.8. Հիմնական ընկերության կարգավիճակում հայտնված Ընկերության մեղքով դուստր ձեռնարկության սնանկացման դեպքում Ընկերությունը սուբսիդար պատասխանատվություն է կրում դուստր ընկերության պարտքերի համար:
5.9. Դուստր Ընկերության կարգավիճակում հայտնված Ընկերության սնանկացման դեպքում հիմնական ընկերակցությունը կամ ընկերությունը սուբսիդար պատասխանատվություն է կրում Ընկերության պարտքերի համար:
5.10. Դուստր Ընկերության սնանկացումը համարվում է հիմնական ընկերակցության կամ ընկերության մեղքով առաջացած, եթե այն վրա է հասել դուստր ընկերության կողմից հիմնական ընկերակցության կամ ընկերության պարտադիր ցուցումները կատարելու հետևանքով:
5.11. Ընկերությունը մեկ այլ (հիմնական) ընկերակցության կամ ընկերության նկատմամբ համարվում է կախյալ, եթե մյուս (գերակշռող, մասնակցող) ընկերությունը կամ ընկերակցությունն ունի Ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան 20 տոկոսը:
5.12. Ընկերությունը մեկ այլ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի ավելի քան 20 (քսան) տոկոսը ձեռք բերելու դեպքում պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անհապաղ տեղեկություններ հրապարակել այդ մասին:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

6.1. Ընկերության գույքը կազմված է հիմնական և շրջանառու միջոցներից, ինչպես նաև արժեթղթերից, որոնց արժեքն արտացոլվում է Ընկերության ինքնուրույն հաշվեկշռում:
6.2. Ընկերության գույքի ձևավորման աղբյուրներն են՝
6.2.1. Ընկերության բաժնետերերի կողմից որպես ավանդ ներդրված դրամական և նյութական միջոցները,
6.2.2. Ընկերության տնտեսական գործունեության արդյունքները (արտադրանքը և ստացված եկամուտները),
6.2.3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ձևերով ձեռք բերված այլ գույքը:
6.3. Ընկերության բաժնետերերը կարող են ներդնել դրամ, արժեթղթեր, այլ գույք, ներառյալ՝ գույքային և դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներ:
6.3.1. Ներդրված գույքի արժեքը որոշվում է Ընկերության բաժնետերերի փոխադարձ համաձայնությամբ և ենթակա է անկախ փորձագիտական վերստուգման (աուդիտի):
6.3.2. Բաժնետոմսերը գնահատվում են Հայաստանի Հանրապետության դրամով:
6.4. Եթե գույքը, նյութական արժեքները, ֆինանսական և այլ միջոցներն Ընկերությանը հանձնվել են օգտագործման իրավունքով, ապա համապատասխան բաժնետերեր-վարկատուի ներդրման չափը որոշվում է այդ գույքի օգտագործման դիմաց տրվող վարձավճարի գումարի չափով: Այդ գույքի պատահական կորստի կամ վնասի ռիսկը կրում է գույքի նկատմամբ իրավունքը ներդրած բաժնետերերը:
6.5. Ընկերության գործունեությունն ապահովելու համար հիմնադիրների ներդրումների հաշվին ստեղծվում է կանոնադրական կապիտալ: Ընկերության կանոնադրական կապիտալը կազմված է Ընկերության բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքների գումարից:
6.6. Ընկերության կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը:

6.7. Ընկերության կանոնադրական կապիտալը չի կարող պակաս լինել Օրենքով սահմանված չափից:
6.8. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 518 229 736 (հինգ հարյուր տասնութ միլիոն երկու հարյուր քսանինը հազար յոթ հարյուր երեսունվեց) դրամ, որը կազմում է 2201 (երկու հազար երկու հարյուր մեկ) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնտոմսի անվանական արժեքը կազմում է 235 451 (երկու հարյուր երեսունհինգ հազար չորս հարյուր հիսունմեկ) դրամ: Ընկերության բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, ամբողջությամբ վճարված և սեփականության իրավունքով պատկանում են Ընկերության միակ բաժնետեր Հայաստանի Հանրապետությանը:
6.9. Ընկերությունը կարող է բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, Օրենքով սահմանված կարգով, ավելացնել իր կանոնադրական կապիտալի չափը՝ բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու միջոցով:
6.10. Ընկերության վնասները ծածկելու համար չի թույլատրվում ավելացնել Ընկերության կանոնադրական կապիտալը:
6.11. Ընկերությունը կարող է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ նվազեցնել իր կանոնադրական կապիտալի չափը՝ բաժնետոմսերի անվանական արժեքը նվազեցնելու և (կամ) Ընկերության բաժնետոմսերի ընդհանուր քանակը պակասեցնելու նպատակով դրանց մի մասը ձեռք բերելու և մարելու միջոցով:
6.12. Ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու մասին որոշում կայացնելուց հետո 30-օրյա ժամկետում Ընկերությունը պարտավոր է բոլոր պարտատերերին գրավոր տեղեկացնել Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին: Ընկերության պարտատերերը Ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու մասին տեղեկություններ ստանալուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում իրավունք ունեն Ընկերությունից պահանջել պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, պարտավորությունների դադարեցում կամ վաղաժամկետ կատարում, ինչպես նաև վնասների հատուցում:
6.13. Ընկերության զուտ ակտիվների արժեքն Ընկերության կանոնադրական կապիտալի չափից նվազելու հիմքով Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը կատարվում է բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքի համամասնորեն պակասեցման ձևով՝առանց բաժնետերերի որևէ հատուցման:

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ ԵՎ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԸ

7.1. Ընկերության շահույթներից մասհանումների հաշվին ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 (տասնհինգ) տոկոսի չափով: Մինչ սահմանված չափին հասնելը,մասհանումները կատարվում են Ընկերության շահույթի առնվազն 5 (հինգ) տոկոսի չափով: սահմանված չափին հասնելուց հետո, պահուստային հիմնադրամի միջոցների օգտագործման դեպքում,շահույթից հատկացումների կատարումը կարող է շարունակվել մինչև պահուստային հիմնադրամի սահմանված չափի վերականգնումը:
7.2. Պահուստային հիմնադրամի միջոցներն օգտագործվում են Ընկերության կորուստները և տնտեսական գործունեության արդյունքում վնասները ծածկելու նպատակով, օրենսգրքով և օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե ընկերության շահույթը և այլ միջոցներն անբավարար են դրա համար: Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:
7.3. Ընկերությունում կարող են ստեղծվել նաև այլ հիմնադրամներ, որոնց կազմը, նշանակությունը, չափերը, ձևավորման աղբյուրները և օգտագործման կարգը սահմանում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը:
7.4. Ընկերության զուտ ակտիվների արժեքը գնահատվում է հաշվապահական հաշվեկշռի կամ աուդիտորական վերստուգման տվյալներով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.5. Եթե Ընկերության գոյության երկրորդ կամ յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից սկսած Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացված Ընկերության տարեկան հաշվապահական հաշվեկշռից կամ ընկերության աուդիտորական ստուգման արդյունքներից պարզվի, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքն Ընկերության կանոնադրական կապիտալից փոքր է, ապա ընկերությունը պարտավոր է հայտարարել իր կանոնադրական կապիտալի չափի նվազեցման մասին: Եթե Ընկերության զուտ ակտիվների արժեքը փոքր է կանոնադրական կապիտալի՝ Օրենքով սահմանված նվազագույն չափից, ապա Ընկերությունը ենթակա է լուծարման:

7.6. Եթե Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշում չի ընդունել Ընկերության կանոնադրական կապիտալի չափը նվազենելու կամ ընկերությունը լուծարելու մասին, ապա Ընկերության բաժնետերերը, պարտատերերը, ինչպես նաև պետության կողմից լիազորված մարմիններն իրավունք ունեն պահանջ ներկայացնել Ընկերությունը դատական կարգով լուծարելու մասին:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ

8.1. Ընկերությունն իրավունք ունի տեղաբաշխել սովորական անվանական բաժնետոմսեր, պարտատոմսեր և օրենքով նախատեսված այլ արժեթղթեր:

Ընկերությունն իրավունք չունի կատարել բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումը բաց բաժանորդագրությամբ կամ այլ կերպ առաջարկել ձեռք բերել դրանք անսահմանափակ թվով անձանց:

8.2. Ընկերության կանոնադրական կապիտալի չափով թողարկված սովորական անվանական բաժնետոմսերը ամբողջությամբ տեղաբաշխվել են բաժնետերերի (հիմնադիրների) միջև:

8.3. Ընկերության սովորական անվանական բաժնետոմսերը ոչ փաստաթղթային են:

8.4. Ընկերության հիմնադիրներին, Ընկերությունը դեռ գրանցված չլինելու դեպքում, տրվում է կանոնադրական կապիտալում նրանց ներդրումը հավաստող վկայական:

8.5. Ընկերությունն իրավունք ունի թողարկել պարտատոմսեր և օրենքով սահմանված այլ արժեթղթեր: Պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումն իրականացվում է Ընկերության տնօրենների խորհրդի որոշմամբ:

8.6. Պարտատոմսը հավաստում է դրա տիրապետողի իրավունքը՝ դրանում նախատեսված ժամկետում Ընկերությունից ստանալ պարտատոմսի անվանական արժեքը կամ գույքային այլ համարժեք, ինչպես նաև պարտատոմսի անվանական արժեքից տոկոսադրույք կամ այլ գույքային իրավունքներ՝ ընկերության կողմից սահմանված ժամկետներում:

8.7. Պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ պետք է սահմանվեն դրանց մարման ձևը, ժամկետները և պայմանները:

8.8. Ընկերությունը կարող է թողարկել միաժամանակյա, ինչպես նաև տարաժամկետ (Ընկերության կողմից սահմանված ժամկետային հաջորդականությամբ) մարման ժամկետով պարտատոմսեր:

8.9. Պարտատոմսերը պետք է ունենան անվանական արժեք: Ընկերության կողմից թողարկված պարտատոմսերի անվանական արժեքների գումարը չպետք է գերազանցի նրա կանոնադրական կապիտալի չափը կամ այն ապահովման գումարը, որը տրամադրված է Ընկերությանը՝ պարտատոմսերի թողարկելու նպատակով:

8.10. Ընկերության պարտատոմսերի մարումն իրականացվում է դրամով կամ այլ գույքով՝ պարտատոմսերի թողարկման մասին որոշման համաձայն: Ընկերությունն իրավունք ունի թողարկել Ընկերության գույքի գրավով ապահովված պարտատոմսեր, երրորդ անձանց

կողմից տրամադրված ապահովությամբ երաշխավորված պարտատոմսեր և առանց ապահովման պարտատոմսեր: Ընկերությունն, առանց ապահովման պարտատոմսեր թողարկելու իրավունք ունի գրացումից երեք տարի հետո և պայմանով, որ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով հաստատված լինեն Ընկերության առնվազն երկու տարեկան հաշվեկշիռները:

8.11. Ընկերությունը կարող է թողարկել ինչպես անվանական, այնպես էլ՝ ըստ ներկայացնողի պարտատոմսեր: Ընկերությունը պարտավոր է վարել իր կողմից տեղաբաշխված անվանական պարտատոմսերի սեփականատերերի գրանցամատյան: Կորցրած անվանական արժեթուղթը վերականգնվում է Ընկերության կողմից՝ վճարի դիմաց: Ըստ ներկայացնողի պարտատոմսը կորցրած սեփականատիրոջ իրավունքները կարող են վերականգնվել միայն դատական կարգով:

8.12. Ընկերությունը կարող է պարտատոմսերի վաղաժամկետ մարման հնարավորություն ընձեռնել՝ դրանց սեփականատերերի ցանկությամբ: Այդ դեպքում պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ պետք է սահմանվեն մարվող գումարի չափը և այն ժամկետը, որից սկսված պարտատոմսերը կարող են ներկայացվել վաղաժամկետ մարման:

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Ընկերության հիմնադրման ժամանակ նրա բաժնետոմսերը պետք է լրիվ վճարվեն մինչև Ընկերության պետական գրանցումը:

9.2. Ընկերության լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքը բաժնետերերի կողմից պետք է վճարվի դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան տեղաբաշխման պահից մեկ տարվա ընթացքում:

9.3. Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարում իրականացվում է դրամով, արժեթղթերով, այլ գույքով կամ գույքային իրավունքներով կամ դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներով:

9.4. Ընկերության հիմնադրման ժամանակ տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց վճարումը կատարվում է հիմնադիրների միջև կնքված պայմանագրին համապատասխան, իսկ լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի, ինչպես նաև Ընկերության կողմից թողարկվող այլ արժեթղթերի դիմաց՝ դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված կարգով և ձևով:

9.5. Ընկերությունն բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարվող գույքի տեսակների վրա սահմանափակումներ կարող են նախատեսվել դրանք տեղաբաշխելու մասին որոշմամբ:

9.6. Լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարման պարտավորությունները խախտած անձանց նկատմամբ կիրառվում են դրամական տույժեր, որոնց չափը սահմանվում է դրանք տեղաբաշխելու մասին որոշմամբ:

10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ

10.1. Ընկերության բաժնետերեր կարող են լինել քաղաքացիները և իրավաբանական անձիք:

10.2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները չեն կարող լինել Ընկերության բաժնետեր:

10.3. Ընկերության մեկ բաժնետեր ունենալու դեպքում սույն կանոնադրությամբ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը պատկանող որոշումներն ընդունում է միակ բաժնետերը՝ միանձնյա, դրանք գրավոր ձևակերպելով:
10.4. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները, ինչպես նաև օտարերկրյա անձինք կարող են լինել Ընկերության բաժնետերեր՝ ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:
10.5. Ընկերության բաժնետերերի քանակը չի կարող ավել լինել Օրենքով սահմանված թվաքանակից: Եթե Ընկերության բաժնետերերի թվաքանակը ավելի է դարձել, քան սահմանված է Օրենքով, ապա մեկ տարվա ընթացում այն պետք է վերակազմավորվի կամ կրճատի բաժնետերերի թվաքանակը, հակառակ դեպքում այն ենթակա է լուծարման դատական կարգով:

11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

11.1. Ընկերության յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է իր սեփականատեր բաժնետիրողը միևնույն իրավունքները: Սովորական բաժնետոմսի սեփականատեր բաժնետերն, իրավունք ունի՝
11.1.1. մասնակցել Ընկերության կառավարմանը.
11.1.2. ստանալ շահութաբաժիններ.
11.1.3. կանոնադրական կապիտալում իր ունեցած բաժնետոմսերի քանակին (%) համամասնորեն, նախապատվության կարգով ձեռք բերել լրացուցիչ թողարկվող և Ընկերության այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը.
11.1.4. ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, սյդ թվում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին, Ընկերության տնտեսական գործունեությանը.
Ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 5 (հինգ) տոկոս կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերը (սեփականատերերը) կարող է (են) պահանջել աուդիտոր՝ Ընկերության գործունեությանը վերաբերվող հաշվետվությունները և գաղտնիք ներկայացնող փաստաթղթերը ստուգելու նպատակով: Ստուգման հետ կապված ծախսերը փոխհատուցում է (են) ստուգում պահանջած բաժնետեր(եր)ը.
11.1.5. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.
11.1.6. Օրենքով սահմանված կարգով առաջարկություններ ներկայացնել բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ.
11.1.7. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող ձայների չափով.
11.1.8. դատարանում հայց հարուցել Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և օրենսդրությանը հակասող որոշումների վերացման պահանջով.
11.1.9. Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իր հասանելի մասը.
11.1.10. Ընկերության միջոցների հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակության սովորական բաժնետոմսեր.

11.1.11. վաճառել կամ Օրենսգրքով, Օրենքով և սույն կանոնադրությամբ չարգելված այլ ձևով օտարել իր բաժնետոմսերը.
11.1.12. օգտվել Օրենսգրքով, Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:
11.2. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերը իրավունք ունեն Ընկերությունից պահանջել իրենց պատկանող բաժնետոմսերի հետ գնումը, եթե՝
11.2.1. որոշում է ընդունվել Ընկերության վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և նշված բաժնետերերը կամ նրանց լիազոր ներկայացուցիչները քվեարկել են Ընկերության վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու դեմ, կամ այդ հարցերով քվեարկությանը չեն մասնակցել:
11.2.2. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ են կատարվել կամ հաստատվել է Ընկերության կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել են նշված բաժնետերերի իրավունքները և նրանք կամ նրանց լիազոր ներկայացուցիչները դեմ են քվեարկել կամ քվեարկության չեն մասնակցել:
11.3. Ընկերության կողմից բաժնետոմսերի հետգնումը կատարվում է դրանց շուկայական արժեքով, որը որոշվում է առանց բաժնետոմսի գնահատման և հետգնման պահանջի իրավունք տվող Ընկերության գործողությունների հետևանքով առաջացող փոփոխությունները հաշվի առնելով:
11.4. Բաժնետոմսերը հետգնելու մասին պահանջ ներկայացնելու իրավունք ունեցող բաժնետերերը պետք է հետգնման մասին դիմում ներկայացնեն Ընկերությանը՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից համապատասխան որոշում կայացնելուց հետո 45 (քառասունհինգ) օրվա ընթացքում: Նշված ժամկետն ավարտվելուց հետո Ընկերությունը պարտավոր է 30 (երեսուն) օրվա ընթացքում հետ գնել բաժնետոմսերը՝ հետգնման դիմում ներկայացրած բաժնետիրոջից (բաժնետերերից):
11.5. Ընկերության կողմից հետ գնված կամ այլ հիմունքներով ձեռք բերված բաժնետոմսերը տնօրինվում են Ընկերության կողմից: Այդ բաժնետոմսերը չունեն ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվառման ժամանակ և դրանց դիմաց շահութաբաժիններ չեն հաշվարկվում: Դրանք ենթակա են տեղաբաշխման մեկ տարվա ընթացքում: Հակառակ դեպքում Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պարտավոր է որոշում ընդունել՝ նշված բաժնետոմսերը մարելու միջոցով Ընկերության կանոնադրական կապիտալի չափը նվազեցնելու մասին:

12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12.1. Ընկերության բաժնետերերը պարտավոր են՝
12.1.1. Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով կատարել դրամական և (կամ) գույքային ներդրումներ.
12.1.2. կատարել Ընկերության հանդեպ ստանձնած պարտավորությունները.
12.1.3. չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ.
12.1.4. կրել Օրենսգրքով, Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ պարտականություններ:

13. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԻՐՈՋԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐՆ ԱՅԼ ԱՆՁԻ ՓՈԽԱՆՑԵԼԸ

13.1. Բաժնետոմսերը վաճառելու կամ այլ ձևով օտարելու մտադրություն ունեցող բաժնետերերը պարտավոր են գնորդի հետ համաձայնեցնել վաճառքի պայմանները, որից հետո գրավոր դիմել Ընկերությանը: Ընկերությանը հասցեագրված դիմումում պետք է նշվեն՝

13.1.1. տեղեկություններ բաժնետոմսերը գնելու ցանկություն հայտնած անձի (անձանց) մասին.

13.1.2. վաճառվող (օտարվող) բաժնետոմսերի քանակը, գինը և այլ պայմաններ:

13.2. Ընկերության տնօրենների խորհուրդը, դիմումն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում գումարում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով:

13.3. Եթե վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու ցանկություն են հայտնել մի քանի բաժնետերեր, նրանցից յուրաքանչյուրի կողմից բաժնետոմսերի ձեռք բերման չափը սահմանվում է նրանց փոխադարձ համաձայնությամբ: Եթե համաձայնություն ձեռք չի բերվել, ապա վաճառվող բաժնետոմսերը նրանց միջև բաշխվում են՝ մինչև այդ նրանց ունեցած բաժնետոմսերի քանակին (%) համամասնական չափով:

13.4. Բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքից հրաժարվելու դեպքում այդ բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքն անցնում է Ընկերությանը, եթե Ընկերությունը ևս հրաժարվում է դրանց ձեռք բերելուց, ապա այդ բաժնետոմսերը կարող են օտարվել երրորդ անձի: Վաճառվող բաժնետոմս(եր)ը ձեռք բերելու նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը բաժնետոմս(եր)ի վաճառքի առաջարկման պահից հաշված՝ 35 օր է:

13.5. Բաժնետոմսերն Ընկերության կողմից ձեռք բերվելու դեպքում՝ Ընկերությունը պարտավոր է որոշում ընդունել հետևյալ կետերից որևէ մեկի վերաբերյալ՝

13.5.1. Գտնել համապատասխան թեկնածու, որին պետք է վաճառվեն բաժնետոմսերը.

13.5.2. Ընկերության բաժնետերերին բաժնետոմսերն առաջարկել արտոնյալ պայմաններով.

13.5.3. Որոշում կայացնել Ընկերության կանոնադրական կապիտալի չափը նվազեցնելու և Ընկերության կողմից ձեռք բերված բաժնետոմսերը մարելու համար:

13.6. Ընկերության բաժնետոմսերը կարող են անցնել բաժնետերեր քաղաքացու ժառանգներին կամ բաժնետեր իրավաբանական անձի իրավահաջորդներին՝ առանց Ընկերության մյուս բաժնետերերի համաձայնության: Իրավահաջորդի (ժառանգի) կողմից բաժնետոմսերից հրաժարվելու դեպքում կիրառվում են սույն կանոնադրության 13.3 և 13.4 կետերի կանոնները:

13.6.1. Ժառանգներն Ընկերության բաժնետերերի ռեեստրում գրանցվում են նոտարական գրասենյակի կողմից ժառանգության վկայագրեր ստանալուց հետո: Նոր բաժնետիրոջը (ժառանգին) պատկանող բաժնետոմսերը, մինչև ռեեստրում գրանցվելը քվեարկությանը չեն մասնակցում:

14. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԸ (ԴԻՎԻԴԵՆՏՆԵՐԸ)

14.1. Ընկերության շահութաբաժինների վճարման կարգը.

14.1.1. Ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց միջանկյալ (եռամսյակային, կիսամյակային) և/կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին.

14.1.2. Շահութաբաժինները վճարվում են Ընկերության զուտ շահույթից (կուտակված շահույթից).
14.1.3. Տարեկան շահութաբաժիններ վճարելու մասին որոշումն ընդունվում է Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը՝ տնօրենների խորհրդի առաջարկությամբ:
14.1.4. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է տնօրենների խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:
14.2. Ընկերությունն իրավունք չունի շահութաբաժիններ հայտարարել և վճարել, եթե տվյալ պահին՝
14.2.1. Ընկերության տնտեսական վիճակը պարունակում է սնանկության հատկանիշներ.
14.2.2. Ընկերության զուտ ակտիվների արժեքը փոքր է կանոնադրական կապիտալից կամ շահութաբաժիններ վճարելու արդյունքնում կպակասի դրա չափից.
14.2.3. Օրենքով նախատեսված դեպքերում:
14.3. Վերը նշված հիմքերը վերանալու դեպքում Ընկերությունը կարող է բաժնետերերին շահութաբաժիններ վճարել Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

15. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

15.1. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:
15.2. Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով:
15.3. Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից 2 ամիս հետո՝ 90 օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:
15.4. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը գումարում է Ընկերության տնօրենների խորհուրդը՝ սույն կանոնադրության սահմանած կարգով:
15.5. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի նիստը նախագահում է Ընկերության տնօրենների խորհուրդի նախագահը:
15.6. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել Ընկերության բաժնետերեր չհանդիսացող գլխավոր տնօրենը, տնօրենները, գլխավոր հաշվապահը, ընկերության աուդիտ իրականացնող անձը, Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը):

16. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16.1. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում՝
16.1.1. Ընկերության կանոնադրությունը հաստատելը, դրանում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելը, Ընկերության կանոնադրության հաստատելը նոր խմբագրությամբ:
16.1.2. Ընկերության վերակազմակերպման մասին որոշում ընդունելը.
16.1.3. Ընկերությունը լուծարելու մասին որոշում ընդունելը, լուծարման հանձնաժողով (լուծարող) նշանակելը, միջանկյալ և լուծարային հաշվեկշիռները հաստատելը.

16.1.4. Ընկերության կանոնադրական կապիտալի չափն ավելացնելը.

16.1.5. Ընկերության կանոնադրական կապիտալի չափը նվազեցնելը.

16.1.6. Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելը։ Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրությունը կատարվում է բացառապես Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրության հարցն Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովներում կարող է քննարկվել, եթե Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը որոշում է ընդունել Ընկերության տնօրենների խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:

16.1.7. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) անդամների ընտրությունը և նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելը. Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) անդամների ընտրությունը կատարվում է բացառապես Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) անդամների ընտրության հարցն Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովներում կարող է քննարկվել, եթե Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը որոշում է ընդունել Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կամ նրա առանձին անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին.

16.1.8. Ընկերության աուդիտն իրականացնող անձին հաստատելը.

16.1.9. Ընկերության տարեկան հաշվետվությունները, հաշվապահական հաշվեկշիռները հաստատելը, շահույթները և վնասները բաշխելը, տարեկան շահութաբաժիններ վճարելու մասին որոշում ընդունելը և տարեկան շահութաբաժինների չափը հաստատելը, ինչպես նաև Ընկերության մասնաճյուղերի ներկայացուցչությունների և հիմնարկների գործունեության տարեկան արդյունքների հաստատելը:

16.1.10. Ընդհանուր ժողովի վարման կարգը սահմանելը և հաշվիչ հանձնաժողովով կազմավորելը.

16.1.11. Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի հրապարակային հայտարարության ձևով.

16.1.12.Բաժնետոմսերի անվանական արժեքը նվազեցնելը և ավելացնելը.

16.1.13. Ընկերության գործարքներում շահագրգռության առկայության դեպքում գործարքներ կատարելու մասին որոշում ընդունելը.

16.1.14.Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում Ընկերության գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքներ կատարելու մասին որոշում ընդունելը, որի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքի կատարման մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսից ավելին:

16.1.15. Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերը ձեռք բերելու և հետ գնելու մասին որոշում ընդունել.

16.1.16. Ընկերության պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրության պայմանները որոշելը.

16.1.17.Ընկերության կողմից դուստր և կախյալ ընկերություններ ստեղծելը, դուստր և կախյալ ընկերություններին մասնակցելը.
16.1.18. Օրենսգրքով, օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումներ ընդունելը:
16.2. Սույն կանոնադրության 16.1.1-16.1.17 ենթակետերով սահմանված հարցերի վերաբերյալ որոշումներ ընդունելը հանդիսանում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունը և չի կարող փոխանցվել Ընկերության գործադիր մարմնին:
16.3. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերը չեն կարող փոխանցվել որոշում ընդունելու համար Ընկերության տնօրենների խորհրդին, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

17. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

17.1. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում ձայնի իրավունքից օգտվում են Ընկերության սովորական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը:
17.2. Ձայնի իրավունք տվող բաժնետոմս է համարվում այն սովորական բաժնետոմսը, որն իր սեփականատիրոջը տալիս է քվեարկության հարցի վերաբերյալ քվեարկությանը մասնակցելու իրավունք:
17.3. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ սույն կանոնադրության 17.4 կետում նշված դեպքերի:
17.4. Սույն կանոնադրության 16 հոդվածի 16.1.1, 16.1.2, 16.1.3, 16.1.4, 16.1.5 և 16.1.14 ենթակետերով նախատեսված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցելու ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների երեք քառորդով, եթե Օրենքով և սույն կանոնադրությամբ այլ բան չի սահմանված:
17.5. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի վարման կարգի մասին որոշումներ ընդունելու կարգը սահմանվում է սույն կանոնադրությամբ և Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատված ներքին փաստաթղթերով:
17.6. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք չունի փոխել օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընգրկված հարցերի վերաբերյալ:
17.7. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները պետք է հաղորդվեն Ընկերության բաժնետերերին՝ Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով՝ այդ որոշումներն ընդունելուց հետո 45 օրվա ընթացքում:
17.8. Ընկերության բաժնետերն իրավունք ունի դատական կարգով բողոքարկել Օրենքի պահանջների խախտմամբ ընդունված Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումը, եթե որոշմամբ խախտվել են նրա իրավունքները և օրինական շահերը:
17.9. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով գումարելու մասին ծանուցագիրը պետք է բովանդակի՝
17.9.1. Ընկերության ֆիրմային անվանումը և գտնվելու վայրը:
17.9.2. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով գումարելու ամսաթիվը, ժամը և վայրը:
17.9.3. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը:
17.9.4. Բաժնետերերի ծանոթացման կարգը՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում քննարկվելիք հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին, որոնք պետք

է Ընկերության բաժնետերերին ներկայացվեն Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը նախապատրաստելու ընթացքում:
17.9.5. Օրենքով սահմանված այլ տեղեկություններ:
17.10. Եթե Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր կամ անվանատեր է հանդիսանում միայն մեկ անձ, ապա ժողովի որոշումները կարող են ընդունվել այդ անձի գրավոր որոշմամբ: Բաժնետեր իրավաբանական անձի որոշումը պետք է ընդունվի վերջինիս կանոնադրությամբ նման լիազորություններ ունեցող մարմնի կողմից:

18. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

18.1. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման նախապատրաստումը կազմակերպում է Ընկերության տնօրենների խորհուրդը:
18.2. Ընկերության բաժնետերերը, ինչպես նաև Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու իրավունք ունեցող Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված անձիք առնվազն 15 օր առաջ գրավոր ծանուցվում են Ընկերության բաժնետերերի ժողով գումարելու մասին:
18.3. Ընկերության բաժնետերերը (բաժնետերերը), որը (որոնք) ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի՝ առնվազն 2 (երկու) տոկոսի սեփականատերն (են), Ընկերության ֆինանսական տարվա ավարտից հետո երեսուն օրվա ընթացքում իրավունք ունի (ունեն) առաջարկություններ ներկայացնել Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ: Օրակարգի վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են գրավոր՝ նշելով առաջարկման հիմքերը, հարցն առաջարկող բաժնետիրոջ (բաժնետերերի) անունը և ազգանունը (անվանումը) նրան (նրանց) պատկանող բաժնետոմսերի քանակը:
18.4. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում Ընկերության տնօրենների խորհուրդը սահմանում է՝
18.4.1. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով գումարելու ամսաթիվը, ժամը և վայրը.
18.4.2. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգը.
18.4.3. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմման ամսաթիվը.
18.4.4. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով գումարելու մասին բաժնետերերին ծանուցելու կարգը.
18.4.5. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում բաժնետերերին ներկայացվելիք տեղեկությունների և նյութերի ցանկը:
18.5. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը նախապատրաստելու ընթացքում բաժնետերերին ներկայացվելիք տեղեկությունները և նյութերն են՝ Ընկերության տարեկան հաշվետվությունը, Ընկերության տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ Ընկերության վերստուգող հանձնաժողովի և Ընկերության աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը, տեղեկությունը, Ընկերության կանոնադրության փոփոխությունների և լրացումների նախագիծը կամ Ընկերության կանոնադրության նախագիծը՝ նոր խմբագրությամբ:

19. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՁՈՐՈՒԹՅՈՒՆԸ (ՔՎՈՐՈՒՄԸ)

19.1. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավազոր է (ունի քվորում), եթե Ընկերության ընդհանուր ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 50 ավելի տոկոսին: Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը տևում է մեկ օրից ավելի, ապա յուրաքանչյուր օրվա համար կազմվում է ժողովի մասնակիցների գրանցման առանձին ցուցակ:

19.2. Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է Ընկերության բաժնետերերի նոր ընդհանուր ժողով գումարելու ամսաթիվը: Քվորումի բացակայության պատճառով նոր ժողով գումարելու դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:

19.3. Ընկերության բաժնետերերի չկայացած ընդհանուր ժողովի փոխարեն գումարվող նոր ժողովը իրավազոր է (ունի քվորում), եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), ովքեր համատեղ տիրապետում են Ընկերության ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 30-ից (երեսունից) ավելի տոկոսին:

20. ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ

20.1. Քվեարկությունն ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում իրականացվում է «Ընկերության մեկ ձայնի իրավունք տվող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկբունքով:

20.2. Քվեարկության արդյունքներով կազմվում է արձանագրություն, որը ստորագրում է հաշվիչ հանձնաժողովի լիազորությունն իրականացնող անձը:

20.3. Քվեարկության արդյունքների մասին արձանագրությունը կցվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրությանը:

20.4. Քվեարկության արդյունքները հրապարակվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում:

21. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

21.1. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրությունը կազմվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի ավարտից հետո 15 օրվա ընթացքում, երկու օրինակով, որոնք ստորագրում են ժողովի նախագահը և քարտուղարը: Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրության մեջ նշվում են՝ 21.2.1 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով գումարելու վայրը և ժամանակը.

21.1.1. Ընկերության ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի ձայների գումարային քանակը, Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցած բաժնետերերին պատկանող ձայների գումարային քանակը:

21.1.2. Ժողովի նախագահը և քարտուղարը, ժողովի օրակարգը.

21.2. Արձանագրությունը պետք է բովանդակի ժողովում հնչած ելույթների հիմնական ելույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, ժողովի կողմից ընդունված որոշումները:
21.3. Ընկերության բաժնետերերը իրավունք ունեն ծանոթանալ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրություններին:

22. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

22.1. Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Ընկերության տնօրենների խորհրդի կողմից՝ իր նախաձեռնությամբ, ինչպես նաև Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու պահին՝ Ընկերության առնվազն 10 տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:
22.2. Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը գումարվում է արտահերթ ընդհանուր ժողովը գումարելու մասին պահանջ ներկայացնելու պահից 45 օրվա ընթացքում:
22.3. Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովներ գումարելու մասին ներկայացված պահանջում պետք է ձևակերպված լինեն այն հարցերը, որոնք առաջարկվում են Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգում և դրանց քննարկման անհրաժեշտության հիմնավորումը:
22.4. Եթե Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով գումարելու պահանջը ներկայացնում են Ընկերության առնվազն 10 տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը, ապա այն պետք է բովանդակի պահանջը ներկայացնող բաժնետերերի (բաժնետիրոջ) անունը և ազգանունը, նրանց պատկանող բաժնետոմսերի քանակը:
22.5. Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով գումարելու պահանջը պետք է ստորագրված լինի ժողովի գումարումը պահանջող անձի կողմից:
22.6. Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով գումարելու մասին որոշումը պետք է կայացվի Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով գումարելու մասին պահանջը ներկայացնելու պահից 10 օրվա ընթացքում:
22.7. Ընկերության տնօրենների խորհուրդը իրավունք չունի մերժել Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով գումարելու պահանջը:
22.8. Եթե Ընկերության տնօրենների խորհուրդը սույն հոդվածի 22.6 կետում սահմանված ժամկետում Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով գումարելու մասին որոշում չի ընդունում, ապա ժողովը կարող է գումարվել արտահերթ ժողով գումարելու պահանջ ներկայացրած անձի (անձանց) կողմից:

23. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

23.1. Ընկերության տնօրենների խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք Օրենքով և սույն կանոնադրությամբ վերաբերում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը:

23.2. Ընկերության տնօրենների խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը՝

23.2.1. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունները որոշելը.

23.2.2. Ընկերության բաժնետերերի տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարումը՝ բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի.

23.2.3. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգի հաստատումը.

23.2.4. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և գումարման հետ.

23.2.5. Պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը.

23.2.6. Ընկերության գործադիր մարմնին՝ գլխավոր տնօրենին հաստատելը, նրա լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելը.

23.2.7. Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.

23.2.8. Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.

23.2.9. Ընկերության աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափի սահմանումը.

23.2.10. Ընկերության պահուստային հիմադրամի օգտագործումը.

23.2.11. Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգով ներքին փաստաթղթերի հաստատումը.

23.2.12. Իրավաբանական անձանց միություններին և այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.

23.2.13. Խոշոր գործարքի կատարման մասին որոշում ընդունելը (միանձնյա), որի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքի կատարման մասին որոշումընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից տոկոսը, եթե որոշումը միանձնյա չի ընդունվել, ապա տնօրենների խորհուրդն իրավունք ունի որոշում ընդունել հարցը Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում քննարկելու մաս.

23.2.14. Ընկերության վարչակազմակերպական կառուցվածի հաստատումը.

23.2.15. Ընկերության ամենամյա ծախսերի նախահաշվի հաստատումը.

23.2.16. Ընկերության մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հիմնարկներ ստեղծելը, դրանց կանոնադրությունները հաստատելը.

23.2.17. Միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի հաստատումը.

23.2.18. Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

23.3. Ընկերությունում խորհուրդ ստեղծող և սույն կանոնադրության 23.2.13 ենթակետով նախատեսված դեպքերում Ընկերության տնօրենների խորհրդի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերը ենթակա են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը, բացառությամբ սույն կանոնադրության 23.2.8, 23.2.14, 23.2.15 և 23.2.17 ենթակետով նախատեսված հարցերի, որոնք Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը: Մնացած այլ

դեպքերում Ընկերության տնօրենների խորհրդի բացառիկ իրավասությանը ենթակա հարցերը չեն կարող փոխանցվել ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

23.4. Ընկերության տնօրենների խորհրդի ընտրությունները և կազմը.

Ընկերության տնօրենների խորհրդի անդամները ընտրվում են Ընկերության բաժնետերերի տարեկան ժողովում կամ արտահերթ ընդհանուր ժողովում՝ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում: Ընկերության տնօրենների խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում:

- Ընկերության տնօրենների խորհրդի անդամների լիազորությունները դադարում են տնօրենների խորհրդի հաջորդ կազմի ընտրելուց հետո:
- Ընկերության տնօրենների խորհրդի քանակական կազմը սահմանում է բաժնետերերի ընդհանուր ժողովը:
- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է որոշում ընդունել Ընկերության տնօրենների խորհրդի ցանկացած անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:
- Ընկերության այն բաժնետերերը, որոնք Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթվի դրությամբ տիրապետում են Ընկերոթյան ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել Ընկերության տնօրենների խորհրդի կազմում, կամ Ընկերության տնօրենների խորհրդի կազմում նշանակել իրենց ներկայացուցիչներին: Այդ իրավունքը վերապահվում է նաև Ընկերության ռեեստրում գրանցված անվանական բաժնետերերին, որին լիազորած բաժնետերերը ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթվի դրությամբ համատեղ տիրապետում են Ըկերության ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին:
- Յուրաքանչյուր բաժնետեր Ընկերության տնօրենների խորհրդում կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ:
- Ընկերության տնօրենների խորհրդի անդամ կարող են լինել գործունակ ֆիզիկական անձիք: Ընկերության տնօրենների խորհրդի անդամ կարող են լինել նաև Ընկերության բաժնետեր չհանդիսացող անձիք:
- Ընկերության գործադիր մարմնի ներկայացուցիչները չեն կարող Ընկերության տնօրենների խորհրդում մեծամասնություն կազմել:
- Ընկերության տնօրենների խորհրդի անդամների նկատմամբ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատված Ընկերության տնօրենների խորհրդի կանոնակարգով կարող են նախատեսվել նաև այլ սահմանափակումներ և պահանջներ:

23.5. Ընկերության տնօրենների խորհրդի նախագահը.

- Ընկերության տնօրենների խորհրդի նախագահը ընտրվում է Ընկերության տնօրենների խորհրդի անդամների կողմից, տնօրենների խորհրդի անդամների կազմից՝ տնօրենների խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ: Ընկերության տնօրենների խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ Ընկերության տնօրրենների խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:

Ընկերության տնօրենների խորհրդի նախագահը.

- կազմակերպում է Ընկերության տնօրենների խորհրդի աշխատանքները.
- գումարում է Ընկերության տնօրենների խորհրդի նիստերը և նախագահում դրանք.

- կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը, նախագահում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները.
- Ընկերության տնօրենների խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականություններն Ընկերության տնօրենների խորհրդի որոշմամբ կատարում է ընկերության տնօրենների խորհրդի անդամներից մեկը:

23.6. Ընկերության տնօրենների խորհրդի նիստերը.

23.6.1. Ընկերության տնօրենների խորհրդի նիստերը գումարվում են Ընկերության տնօրենների խորհրդի նախագահի նախաձեռնությամբ, Ընկերության տնօրենների խորհրդի անդամի, Ընկերության Վերստուգողի, Ընկերության գործադիր տնօրենի, ինչպես նաև Ընկերության կանոնադրությամբ սահմանված այլ անձանց պահանջով:

23.6.2. Ընկերության տնօրենների խորհրդի նիստերի քվորումը չի կարող Ընկերության տնօրենների խորհրդի անդամների կեսից պակաս լինել:

23.7. Ընկերության տնօրենների խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

23.8. Ընկերության տնօրենների խորհրդի նախագահը, ձայների հավասարության դեպքում, որոշիչ ձայնի իրավունք ունի:

23.9. Ընկերության տնօրենների խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 10-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում է՝

- Նիստի գումարման տեղը և ժամանակը.
- Նիստի ներկա անձինք.
- Նիստի օրակարգը.
- Քվեարկության դրված հարցերը և քվեարկության արդյունքները
- Նիստում ընդունված որոշումները:

23.10. Ընկերության տնօրենների խորհրդի նիստերն արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

24. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ

24.1. Ընկերության կառավարման գործադիր մարմինը (միանձնյա) Ընկերության գլխավոր տնօրենն է, որն իրականացնում է Ընկերության գործունեության ընթացիկ ղեկավարումը: Նա չի կարող միևնույն ժամանակ հանդիսանալ Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամ: Ընկերության գլխավոր տնօրենը լուծում է Ընկերության գործունեության հետ կապված բոլոր հարցերը, բացառությամբ՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին և Ընկերության տնօրենների խորհրդին վերապահվածները: Նա հաշվետու է Ընկերության տնօրենների խորհրդին, բաժնետերերի ընդհանուր ժողովին և կազմակերպում է վերջիններիս որոշումների իրագործումը:

24.2. Ընկերության գլխավոր տնօրենը՝

24.2.1. տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքների է կատարում Ընկերության անունից.

24.2.2. ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

24.2.3. գործում է առանց լիազորագրի.

24.2.4. տալիս է լիազորագրեր.

24.2.5. սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ նաև աշխատանքային.
24.2.6. բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում նաև տարադրամային) և այլ հաշիվներ,
24.2.7. Ընկերության տնօրենների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային կանոնակարգը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը,
24.2.8. Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
24.2.9. սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին այդ թվում՝ տնօրեններին և գլխավոր հաշվապահին,
24.2.10. աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պահասխանատվության միջոցներ,
24.3. Ընկերության գլխավոր տնօրենի իրավունքները և պարտականությունները սահմանվում են Օրենքով, սույն կանոնադրությամբ և Ընկերության հետ կնքված աշխատանքային պայմանագրով:
24.4. Ընկերության տնօրենների խորհուրդը իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել Ընկերության գլխավոր տնօրենի հետ կնքված պայմանագիրը:
24.5. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ գործադիր մարմնի իրավասությունները պայմանագրով կարող են փոխանցվել մասնագիտացված առևտրային կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ (կառավարչի)՝ Օրենքով սահմանված կարգով:
24.6. Ընկերության գլխավոր տնօրենը կամ կառավարիչը իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ Ընկերության: Ընկերության գործադիր տնօրենը կամ կառավարիչը Ընկերության առջև Օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասների համար:
24.7 Ընկերության գլխավոր տնօրենի գործուղումը իրականացվում է բացառապես Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի հետ համաձայնեցնելուց հետո:
24.8. Ընկերության գլխավոր տնօրենին արձակուրդ տրամադրվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի հրամանով, նախապես համաձայնություն ստանալուց հետո:
24.9. Ընկերության գլխավոր տնօրենի բացակայության դեպքում նրան փոխարինում է Ընկերության տնօրենի տեղակալներից մեկը:

25. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ

25.1. Ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրը վարվում է ՀՀ իրավական ակտերով սահմանված կարգով: Ռեեստրում նծվում են յուրաքանչյուր գրանցված անձի (բաժնետիրոջ, անվանատիրոջ) մասին տեղեկություններ, ինչպես նաև գրառվում են Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված տեղեկությունները:
25.2. Ընկերության բաժնետերերի ռեեստրը, Ընկերության հանձնարարությամբ վարվում և պահպանվում է մասնագիտացված կազմակերության կողմից:
25.3. Բաժնետերը, ինչպես նաև Ընկերության արժեթղթերի սեփականատերը պարտավոր են Ընկերության ռեեստրը վարողին ժամանակին տեղեկացնել իրենց վերաբերող տվյալների փոփոխության մասին: Նշված տվյալները բաժնետիրոջ, ինչպես նաև Ընկերության այլ

արժեթեղթերի սեփականատիրոջ կողմից չներկայացնելու դեպքում, Ընկերությունը և ռեեստրը վարող մասնագիտական կազմակերպությունը պատասխանատվություն չեն կրում բաժնետիրոջը, ինչպես նաև Ընկերության այլ արժեթղթերի սեփականատիրոջը պատճառված վնասի համար:

25.4. Ընկերության բաժնետերերի ռեեստրում գրառումը կատարվում է բաժնետիրոջ կամ Ընկերության այլ արժեթղթերի սեփականատիրոջ պահանջով արժեթուղթը և սույն կանոնադրության 25.1 ենթակետով սահմանված փաստաթղթերը ներկայացնելու պահից երեք օրվա ընթացքում:

25.5. Բաժնետիրոջ, ինչպես նաև Ընկերության այլ արժեթղթերի սեփականատիրոջ պահանջով Ընկերության բաժնետերերի ռեեստրը վարողը պարտավոր է հաստատել բաժնետիրոջ, կամ Ընկերության այլ արժեթղթերի սեփականատիրոջ սեփականության իրավունքը՝ այդ անձին ռեեստրից համապատասխան քաղվածք տրամադրելով:

26. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

26.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունը իրականացնում է վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը): Վերստուգող հանձնաժողովի անդամները/վերստուգողը (ընտրվում են)է) Ընկերության բաժնետերերի ժողովում՝ 3 տարի ժամանակով:

Ընկերության վերաստուգող հանձնաժողովի անդամների թվաքանակը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ վերստուգող հանձնաժողովի լիազորությունները կարող են դրվել վերստուգողի վրա:

26.2. Ընկերության վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) իրավունք ունի ցանկացած ժամանակ կատարել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումներ և ծանոթանալ Ընկերության գործունեությանն առընչվող բոլոր փաստաթղթերին:

26.3. Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) պահանջով Ընկերության գլխավոր տնօրենը պարտավոր է տալ անհրաժեշտ պարզաբանումներ:

26.4. Ընկերության վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) ստուգում է Ընկերության տարեկան հաշվետվությունները և հաշվապահական հաշվեկշիռը, դրանց վերաբերյալ տալիս է եզրակացություն:

26.5. Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովն իրավունք չունի հաստատել Ընկերության տարեկան հաշվետվությունները, հաշվապահական հաշվեկշիռը, եթե չկա Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացությունը:

26.6. Ընկերության վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) պարտավոր է պահանջել Ընկերության բաժնետերերի արտահերթ ժողով, եթե Ընկերության և (կամ) նրա բաժնետերերի շահերին վտանգ է սպառնում, կամ եթե հայտնաբերվել են Ընկերության պաշտոնատար անձանց կողմից կատարված չարաշահումներ:

26.7. Տարեկան ֆինանսական հաշվետվության ստուգման և հաստատման համար Ընկերությունն իրավունք ունի, իսկ Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում պարտավոր է հրավիրել աուդիտոր:
26.8. Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) և աուդիտի ծախսերի փոխհատուցման կարգը, ինչպես նաև նրանց վարձատրության չափը սահմանում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը:

27. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

27.1. Ընկերությունը կարող է վերակազմակերպվել (միաձուլվել, միացվել, բաժանվել, առանձնացվել, վերակազմավորվել) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված առանձին դեպքերում նաև դատարանի որոշմամբ:
27.2. Ընկերությունը, բացառությամբ միացման ձևով վերակազմակերպման դեպքում, վերակազմակերպված է համարվում նոր ստեղծված իրավաբանական անձանց պետական գրանցման պահից:
27.3. Ընկերության միաձուլման դեպքում նրա իրավունքները և պարտականությունները անցնում են նոր առաջացած ընկերությանը՝ փոխանցման ակտին համապատասխան:
27.4. Ընկերության՝ այլ ընկերության միանալու դեպքում Ընկերության իրավունքները և պարտականություններն անցնում են միացված ընկերությանը՝ փոխանցման ակտին համապատասխան
27.5. Ընկերության բաժանման դեպքում նրա իրավունքները և պարտականությունները անցնում են նոր առաջացած ընկերություններին՝ բաժանիչ հաշվեկշռին համապատասխան:
27.6. Ընկերության կողմից մեկ կամ մի քանի ընկերությունների առանձնանալու դեպքում, վերակազմակերպված Ընկերության իրավունքները և պարտականությունները նրանցից յուրաքանչյուրին անցնում են բաժանիչ հաշվեկշռին համապատասխան:
27.7. Ընկերությունը կարող է վերակազմավորվել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կամ առևտրային կոոպերատիվի: Վերակազմավորվելու դեպքում (կազմակերպական-իրավական ձևի փոփոխում) նոր առաջացած իրավաբանական անձին են անցնում Ընկերության իրավունքները և պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան:
27.8. Ընկերության վերակազմակերպումը կատարվում է օրենքով սահմանված կարգով և ենթակա է պետական գրանցման:

28. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

28.1. Ընկերությունը կարող է լուծարվել Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ (ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետերերի սեփականատերերի ձայների 2/3-ից) կամ օրենքով սահմանված առանձին դեպքերում նաև դատարանի որոշմամբ:
28.2. Ընկերության լուծարմամբ նրա գործունեությունը (գոյությունը) դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգի այլ անձանց անցնելու:
28.3. Ընկերությունը կարող է լուծարվել՝
28.3.1. կամովին՝ նրա բաժնետերերի ընդհանուրն ժողովի որոշմամբ.

28.3.2. դատարանի կողմից Ընկերության գրանցումն անվավեր ճանաչելու դեպքում՝ կապված այն ստեղծելու ժամանակ թույլ տված օրենքի կամ այլ իրավական ակտերի խախտումների հետ.
28.3.3. դատարանի վճռով՝ առանց թույլտվության (լիցենզիայի) կամ օրենքով արգելված գործունեություն իրականացնելու, օրենքի կամ այլ իրավական ակտերի խախտումների հետ.
28.3.4. սնանկության հետևանքով.
28.3.5. սույն կանոնադրության 7.5., 7.6 և 10.5 ենթակետերով նախատեսված հիմքերով.
28.3.6. օրենքով նախատեսված այլ հիմքերով:
28.4. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պարտավոր է Ընկերության լուծարման մասին անհապաղ տեղեկացնել իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնին, որն իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում տեղեկություններ է գրառում նրա լուծարման գործընթացում գտնվելու մասին:
28.5. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը Ընկերության լուծարման մասին որոշում ընդունելուց հետո նշանակում է լուծարման հանձնաժողով (լուծարող) և, օրենքին համապատասխան, սահմանում է լուծարման կարգը և ժամկետները:
28.6. Լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում Ընկերության գործերի կառավարման լիազորությունները: Լուծարող Ընկերության անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:
28.7. Լուծարման հանձնաժողովն Ընկերության պետական գրանցման մասին տվյալներ պարունակող մամուլում տեղեկություններ է հրապարակում նրա լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի և ժամկետի մասին: Այդ ժամկետը չի կարող պակաս լինել 2 ամսից՝ սկսած լուծարման մասին հայտարարության հրապարակման պահից: Լուծարման հանձնաժողովը միջոցներ է ձեռնարկում պարտատերերին հայտնաբերելու և դեբիտորական պարտքն ստանալու ուղղությամբ, ինչպես նաև պարտատերերին տեղեկացնում է Ընկերության լուծարման մասին:
28.8. Պարտատերերի կողմից պահանջների ներկայացման ժամկետի ավարտից հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման միջանկյալ հաշվեկշիռ, որը տեղեկություններ է պարունակում լուծարվող Ընկերության գույքի կազմի, պարտատերերի քննարկման արդյունքների մասին: Լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատում է Ընկերության լուծարման մասին որոշումն ընդունող մարմինը:
28.9. Լուծարման հանձնաժողովը լուծարվող Ընկերության պարտատերերին գումարներ է վճարում օրենքով սահմանված հերթականությամբ՝ լուծարման միջանկյալ հաշվեկշռին համապատասխան՝ սկսած դրա հաստատման օրվանից:
28.10. Պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռ, որը հաստատվում է լուծարման հաշվեկշիռը, որը հաստատվում է լուծարման մասին որոշումն ընդունող մարմնի կողմից: Հաստատված լուծարման հաշվեկշիռը լուծարման հանձնաժողովը ներկայացնում է իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնին:
28.11. Պարտատերերի պահանջները բավարարելուց հետո Ընկերության մնացած գույքը հանձնվում է նրա բաժնետերերին:
28.12. Դրամական միջոցների վճարումը պարտատերերին պետք է կատարվի լուծարային հանձնաժողովի կողմից լուծարային միջանկյալ հաշվեկշռին համապատասխան:

28.13. Ընկերության պարտավորությունների վերաբերյալ պահանջատիրոջ կողմից դատարանում հայց հարուցելու դեպքում Ընկերության գույքը ենթակա չէ բաժանման բաժնետերերի միջև՝ մինչև դատարանի որոշման օրինական ուժի մեջ մտնելը:

28.14. Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը՝ դադարած, պետական գրանցման պահից:

28.15. Լուծարման հանձնաժողովը կազմակերպում է լուծարվող Ընկերության գործունեությամբ առաջացած, անձնակազմին վերաբերող փաստաթղթերի առանձնացումը և հանձնումը պետական կամ համայնքային արխիվ՝ "Արխիվային գործի մասին" ՀՀ օրենքով սահմանված կարգով: